

## 2004 թվականի ապրիլի 29–ի 2004/37/ԵՀ հրահանգ

**Աշխատավայրում քաղցկեղածին կամ մուտագեն նյութերի ազդեցությանը ենթարկվելու հետ կապված վտանգներից աշխատողներին պաշտպանելու մասին (Վեցերորդ առանձին հրահանգ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով)**

### **ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Սույն Հրահանգը չի կիրառվում այն աշխատողների նկատմամբ, ովքեր ենթարկվում են միայն «Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ստեղծման մասին» պայմանագրով (Եվրատոմ պայմանագիր) սահմանված ճառագայթման տեսակների ազդեցությանը: Այն կիրառվում է ասբեստի ազդեցությանը ենթարկվող աշխատողների նկատմամբ այն դեպքում, երբ դրա դրույթներն ավելի բարենպաստ են, քան 83/477/ԵՏՀ հրահանգի (վերջին անգամ 2003/18/ԵՀ հրահանգով փոփոխված) դրույթները: 89/391/ԵՏՀ հրահանգը կիրառվում է ամբողջությամբ՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին:

Ցանկացած այնպիսի աշխատանքի դեպքում, որը կարող է քաղցկեղածին կամ մուտագեն նյութերի ազդեցությանը ենթարկվելու վտանգ ներառել, ազդեցությանը ենթարկվելու բնույթը, աստիճանը և տևողությունը պետք է որոշվեն կանոնավորապես՝ աշխատողների առողջության կամ անվտանգության հետ կապված ցանկացած ռիսկ գնահատելու և ձեռնարկվելիք քայլերը որոշելու նպատակով: Պետք է հաշվի առնվեն ազդեցությանը ենթարկվելու բոլոր ուղիները, այդ թվում՝ մաշկի մեջ և (կամ) դրա միջոցով ներթափանցելու ուղիները: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել այն աշխատողներին, ովքեր առավել շատ են ենթարկվում ռիսկի:

### **ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **Նյութերի մակարդակի նվազեցումը և դրանց փոխարինումը**

Գործատուները պետք է նվազեցնեն քաղցկեղածին կամ մուտագեն նյութերի օգտագործման մակարդակը՝ մասնավորապես փոխարինելով դրանք ոչ վտանգավոր կամ պակաս վտանգավոր նյութով, պատրաստուկով կամ պրոցեսով՝ այնքանով, որքանով դա տեխնիկապես հնարավոր է:

## **Ազդեցության կանխումը և նվազեցումը**

Գործատուները պետք է ապահովեն, որ ածխածին կամ մուտագեն նյութերն արտադրվեն և օգտագործվեն փակ համակարգում: Եթե դա տեխնիկապես հնարավոր չէ, ապա գործատուները պետք է ապահովեն, որ ազդեցության մակարդակը լինի հնարավորինս ցածր՝ այնքանով, որքանով դա տեխնիկապես հնարավոր է: Ազդեցության մակարդակը չպետք է գերազանցի III հավելվածով սահմանված նորմաները:

## **Իրավասու մարմնին տրամադրվող տեղեկությունները**

Գործատուները պետք է իրավասու մարմնին, վերջինիս պահանջի դեպքում, տեղեկություններ տրամադրեն՝ կապված այնպիսի հարցերի հետ, ինչպիսիք քաղցկեղածին կամ մուտագեն նյութեր օգտագործելու պատճառները, ձեռնարկվող կանխարգելիչ միջոցառումները և ազդեցությանը ենթարկվող աշխատողների թիվն են:

## **Չկանխատեսված ազդեցությունը**

Այնպիսի չկանխատեսված պատահարների կամ վթարների դեպքում, որոնք կարող են պատճառ լինել, որ ազդեցությունն աշխատողների վրա նորմայից բարձր լինի, գործատուները պետք է տեղյակ պահեն իրենց աշխատողներին: Աշխատողները պետք է կրեն պաշտպանող հագուստներ և շնչառության պաշտպանության անհատական սարքավորումներ, իսկ ազդեցությունը պետք է լինի անհրաժեշտ նվազագույն մակարդակի վրա:

## **Կանխատեսված ազդեցությունը**

Որոշ աշխատանքների դեպքում, ինչպիսիք տեխնիկական սպասարկման աշխատանքներն են, ազդեցության մակարդակի զգալի բարձրացումը կանխատեսելի է, և որի դեմ ձեռնարկվել են բոլոր կանխարգելիչ միջոցները, գործատուները պետք է որոշեն, թե ինչ միջոցներ են անհրաժեշտ՝ հնարավորինս կրճատելու աշխատողների կողմից ազդեցությանը ենթարկվելու ժամանակը և ապահովել, որ նրանք այս աշխատանքների ընթացքում պաշտպանված լինեն: Աշխատողները պետք է կրեն պաշտպանող հագուստներ և շնչառության պաշտպանության անհատական սարքավորումներ, իսկ ազդեցությունը պետք

է լինի անհրաժեշտ նվազագույն մակարդակի վրա: Ավելին, նման աշխատանքների համար օգտագործվող տարածքները պետք է հստակ սահմանազատվեն և նշվեն:

### **Ռիսկային տարածքներ մուտք գործելը**

Գործատուները պետք է սահմանափակեն այն աշխատողների կողմից ռիսկային տարածքներ մուտք գործելը, ովքեր, ելնելով իրենց աշխատանքից կամ պարտավորություններից, ստիպված են մտնել նման տարածքներ:

### **Հիգիենայի և անձնական պաշտպանության միջոցներ**

Գործատուները պարտավոր են բոլոր այն աշխատանքների մասով, որոնք կապված են թունավորման ռիսկերի հետ, ձեռնարկել հետևյալ միջոցները՝

- ապահովել, որ աշխատողները չուտեն, չխմեն և չծխեն այն աշխատանքային տարածքներում, որտեղ թունավորման վտանգ կա,
- աշխատողներին տրամադրել համապատասխան հագուստներ և հատկացնել առանձին տարածքներ՝ աշխատանքային հագուստներն ու դրսի հագուստները պահելու համար,
- ապահովել լվացարաններ և զուգարաններ,
- պատշաճ մակարդակով պահպանել, ստուգել և մաքրել պաշտպանիչ սարքավորումները յուրաքանչյուր օգտագործումից առաջ և հետո:

Այս միջոցների հետ կապված ծախսերը չպետք է աշխատողները հոգան :

### **Աշխատողների համար տեղեկատվություն, վերապատրաստում և խորհրդատվություն ապահովելը**

Գործատուները պետք է ձեռնարկեն համապատասխան քայլեր՝ ապահովելու համար, որ աշխատողները և (կամ) նրանց ներկայացուցիչները բավարար մակարդակով մասնակցեն համապատասխան վերապատրաստման դասընթացների՝ կապված հետևյալի հետ՝

- առողջության համար հնարավոր և հավելյալ ռիսկեր (ծխելը),

- նախազգուշական միջոցներ՝ ազդեցությունը կանխելու համար,
- հիգիենային ներկայացվող պահանջներ,
- պաշտպանիչ հագուստ,
- պատահարի դեպքում ձեռնարկվող միջոցներ:

Գործատուները պետք է ապահովեն, որ քաղցկեղածին և մուտագեն նյութեր պարունակող կոնտեյներների, փաթեթվածքների ու սարքավորումների վրա փակցվեն պարզ և ընթեռնելի պիտակներ, և որ տեսանելի վայրում տեղադրվեն նախազգուշական ցուցանակներ:

Պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար, որ աշխատողները կարողանան գնահատել՝ արդյոք սույն Հրահանգը պատշաճ մակարդակով է իրականացվում, թե ոչ: Նորմայից բարձր ազդեցության դեպքում դրա մասին պետք է անմիջապես տեղեկացնել աշխատողներին:

Գործատուները պետք է անընդհատ նորացնեն այն աշխատողների ցանկը, ովքեր կատարում են այնպիսի աշխատանքներ, որոնք ուղեկցվում են իրենց առողջությանը և անվտանգությանը սպառնացող ռիսկերով՝ կապված քաղցկեղածին ու մուտագեն նյութերի ազդեցությանը ենթարկվելու հետ:

Աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ անհրաժեշտ է անցկացնել խորհրդակցություններ՝ քաղցկեղածին և մուտագեն նյութերի ազդեցությանը ենթարկվելու հետ կապված բոլոր հարցերի շուրջ, և նրանք պետք է տեղեկացված լինեն այդ հարցերի մասին:

## **ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

### **Առողջական վիճակի գննումը**

Անդամ պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն՝ ազդեցությանը ենթարկվող յուրաքանչյուր աշխատողի առողջական վիճակի պատշաճ մակարդակով գննումն ապահովելու համար: Ձեռնարկվող քայլերը պետք է հնարավոր դարձնեն առողջության պահպանման անհատական և տվյալ աշխատանքին հարմարեցված միջոցներ կիրառելը: Աշխատողի առողջական վիճակի գննության ժամանակ պետք է կազմվի անհատական բժշկական քարտ: Աշխատողների առողջական վիճակի գննությանը վերաբերող պրակտիկ առաջարկներն ընդգրկված են II հավելվածում: Աշխատավայրում ազդեցության

ենթարկվելու հետևանքով քաղցկեղի առաջացման բոլոր դեպքերի մասին պետք է տեղեկացնել իրավասու մարմնին:

### **Տվյալների վարումը**

Ազդեցությանը ենթարկվող աշխատողների թարմացված ցանկը, որի համար պատասխանատու է գործատուն, ինչպես նաև անհատական բժշկական քարտերը, պետք է պահվեն առնվազն 40 տարի՝ ազդեցությանը ենթարկվելուց հետո:

### **Սահմանային նորմաները**

Խորհուրդը հրահանգներում, հնարավորության դեպքում, սահմանում է քաղցկեղածին և մուտագեն նյութերի սահմանային նորմաները և, անհրաժեշտության դեպքում, դրանց ուղղակիորեն առնչվող այլ դրույթներ: III հավելվածում նշված են բենզոլի, վինիլքլորիդի մոնոմերի և կարծր փայտանյութի փոշու սահմանային նորմաները:

I հավելվածը (նյութերի, պատրաստուկների և պրոցեսների ցանկը) և III հավելվածը (սահմանային նորմաները) կարող են փոփոխվել միայն Խորհրդի կողմից (Պայմանագրի 137-րդ հոդված): II հավելվածի տեխնիկական փոփոխությունները (աշխատողների առողջության զննությանը վերաբերող պրակտիկ առաջարկներ) ընդունվում են 89/391/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածով սահմանված կարգով:

### **Համատեքստը**

Սույն Հրահանգը համախմբող հրահանգ է, որը փոխարինում է 90/394/ԵՏՀ հրահանգին և դրանում կատարված հետագա փոփոխություններին (90/394/ԵՏՀ հրահանգ, 97/42/ԵՀ հրահանգ և 1999/38/ԵՀ հրահանգ): Սույն Հրահանգով փոփոխություններ չեն կատարվում, և այն պարզապես համախմբում է այն հրահանգների տեքստերը, որոնց այն փոխարինում է: Ազգային օրենսդրության 90/394/ԵՏՀ, 97/42/ԵՀ և 1999/38/ԵՀ հրահանգների փոխատեղման վերջնաժամկետները ուժի մեջ են: